ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 471
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքը (Արմավիր քաղաքը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ
(Արմավիր համայնքի (Արմավիր քաղաքի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքը (Արմավիր քաղաքը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արմավիր-3 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի (Արմավիր քաղաքի) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
04-001-0555-0008 կադաստրային ծածկագրով 3.2814 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողեր	04-001-0555-0008 կադաստրային ծածկագրով 3.2814 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Անհրաժեշտ է կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել ապահովելով՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գրությամբ տրամադրված «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲ ընկերության կողմից ներկայացված պահանջները:

4. Արմավիր համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել համայնքի (Արմավիր քաղաքի) ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Արմավիր մարզի Արմավիր համայնքի (Արմավիր քաղաքի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ա.Ղուլարյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ.Դավթյան

Երևան, «22» «դեկտեմբերի» 2023 թ.